

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

Զբանն առաջին զոր արարի վասն ամենայնի, ո՛ Թէոփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել, Մինչև յօրն պատուիրելոյ առաքելոցն ի ձեռն Հոգւոյն Սրբոյ՝ զորս ընտրեացն, և վերացաւ. Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարանացն իւրոց և ի բազում արուեստս յաւուրս քառասուն երևել նոցա, և ասել վասն արքայութեանն Աստուծոյ: Եւ ի հաղորդել ընդ նոսա հացի՝ պատուէր տայր նոցա յԵրուսաղեմէ մի՛ մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր զոր լուարուքն յինէն: Զի Յովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դուք մկրտիցիք ի Հոգին Սուրբ, ոչ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ: Եւ նոքա մատուցեալ հարցանէին զնա և ասէին, Տէր, եթէ ի ժամանակի՞ աստ յայսմիկ հաստատանելոց ՝ի ցես զարքայութիւն Իսրայելի: Ասէ ցնոսա, Ոչ է ձեզ գիտել զժամս և զժամանակս, զոր Հայր եդ յԻւրում իշխանութեան: Այլ առնիք զօրութիւն ի հասանել Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձեր. և եղիցիք Ինձ վկայք յԵրուսաղէմ և յամենայն Հրէաստանի և ի Սամարիա և մինչև ի ծագս երկրի: Եւ զայս իբրև ասաց, մինչդեռ հայէին նոքա, վերացաւ. և ամպն կալաւ զնա յաչաց նոցա: Եւ մինչդեռ պշուցեալ հայէին ընդ երկինս երթալոյ Նորա, և անհատնիկ արք երկու երևեցան նոցա ի հանդերձս սպիտակս, Որք և ասացին, Արք Գալիլեացիք, զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս. այս Յիսուս որ վերացաւն ի ձէնջ յերկինս՝ սոյնպէս եկեսցէ զոր օրինակ տեսէք զնա երթեալ յերկինս: Ապա դարձան յԵրուսաղէմ յանուանեալ լեռնէն Ձիթենեաց, որ է մերձ յԵրուսաղէմ ըստ շաբաթուն հանապարհի: Եւ իբրև մտին, ելին ի Վերնատունն ուր վանքն իսկ էին, Պետրոս և Յակովբոս, Յովհաննէս և Անդրէաս, Փիլիպպոս և Թովմաս, Բարթողիմէոս և Մատթէոս, Յակովբոս Ալփեան և Շմաւոն Նախանձայոյզ և Յուդա Յակովբեան: Սոքա ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս հանդերձ կանանաւքն և Մարեմաւ Մարքն Յիսուսի և եղբարքն նորա:

(ԳԼՈՒԽ Ա, 1—14)